Գերմանիայի
Դաշնային
Հանրապետություն

Bundesamt
für Migration
und Flüchtlinge

euaa
EUROPEAN UNION
AGENCY FOR ASYLUM

ԻՆՉ Է ՊԵՏՔ ԻՄԱՆԱԼ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՆՈՒՂԵԿԻՑ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գերմանիա ժամանել ենք՝ պաշտպանություն հայցելու նպատակով։

Մենք այստեղ ենք առանց մեր ծնողների ուղեկցության։

Ողջույն։
Ես Լիզան եմ։
Ես այստեղ կպատմեմ ձեզ,
թե ինչպես դիմել ապաստան
ստանալու համար։
Ապաստանը, նաեւ անվանում են
միջազգային պաշտպանություն։

Ի՞նչ է միջազգային պաշտպանությունը:

Եթե դուք չեք կարող վերադառնալ ձեր հայրենիք՝ այնտեղ առկա վտանգի պատճառով, դուք կարող եք ստանալ միջազգային պաշտպանություն: Սա նշանակում է, որ կարող եք ապահով մնալ այն երկրում, որը ձեզ պաշտպանություն է տրամադրել:

Ձեր խնամակալը մանրամասն կբացատրի, թե ովքեր կարող են ստանալ միջազգային պաշտպանություն եւ ինչ ընթացակարգով է այն տրամադրվում:

Եվրոպայում «միջազգային պաշտպանություն» հասկացությունը հաճախ անվանում են նաեւ ապաստան, փախստականի կարգավիճակ կամ լրացուցիչ պաշտպանություն: Հավանաբար, դուք արդեն լսել եք «ապաստան» բառը: Հետագայում, խոսակցությունը պարզեցնելու համար, մենք կօգտագործենք հենց այդ բառը:

Հիշե՛ք, այժմ դուք ապահով եք:

Եվրոպայում բոլորին հավասար են վերաբերվում՝ անկախ նրանց ծագումից, դավանանքից կամ ռասայական պատկանելությունից:

Եվրոպայում 18 տարեկանից փոքր յուրաքանչյուր ոք համարվում է երեխա։

Որպես երեխա՝ դուք ունեք հատուկ իրավունքներ։ Ձեր անվտանգությունն ու բարեկեցությունը շատ կարեւոր են։



Դուք կհանդիպեք տարբեր պաշտոնատար անձանց, մասնավորապես՝ ապաստանի հարցերով զբաղվող մարմինների ներկայացուցիչների հետ: Նրանք հարցեր կուղղեն ձեզ՝ ձեր անձնական տվյալների եւ դեպի Եվրոպա կատարած ճանապարհորդության վերաբերյալ:

Հարկ է հիշել, որ այդ պաշտոնյաների խնդիրն է ապահովել ձեր պաշտպանությունը եւ որոշում կայացնել՝ ելնելով ձեր լավագույն շահերից:

Դուք իրավունք ունեք ազատորեն հայտնելու ձեր կարծիքը, կարիքներն ու մտահոգությունները պատասխանատու անձանց հետ շփման ընթացքում:

Ո՞վ է խնամակալը:

Քանի որ դուք ժամանել եք առանց ձեր ծնողների, իրավասու մարմինները ձեզ համար կնշանակեն խնամակալ: Խնամակալը չափահաս անձ է, որը պատասխանատու է Եվրոպա առանց ուղեկցության ժամանած անչափահասների համար եւ ցուցաբերում է նրանց անհրաժեշտ աջակցություն:

Խնամակալ կարող է նշանակվել ինչպես տղամարդ, այնպես էլ կին: Խնամակալը հանդիսանում է նաեւ անձի օրինական ներկայացուցիչը: Խնամակալներ կարող են լինել նաև երիտասարդների հարցերով զբաղվող մարմինների աշխատակիցները:

Եթե դուք դեռ չեք հանդիպել ձեր խնամակալին, հանդիպումը կկազմակերպվի առաջին իսկ հնարավորության դեպքում: Որոշ դեպքերում, մինչեւ մշտական խնամակալի հետ հանդիպումը, իրավասու մարմինները կարող են նշանակել ժամանակավոր խնամակալ՝ ձեզ անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Ձեր խնամակալը ձեր կողքին է՝ օգնելու, բացատրելու եւ աջակցելու ձեզ: Նա կօգնի հասկանալ ձեր մնալու պայմանները, կբացատրի ընթացակարգերը, ձեր իրավունքներն ու պարտականությունները եւ ձեզ հետ կմասնակցի հանդիպումներին իշխանությունների հետ:

Դուք միշտ կարող եք խոսել ձեր խնամակալի հետ, կիսվել ձեր մտքերով, հարցեր տալ կամ ասել, եթե ինչ-որ բանի կարիք ունեք: Խնամակալը այստեղ է, որպեսզի դուք զգաք անվտանգ եւ պաշտպանված:

Եթե խնդիրներ ունեք ձեր խնամակալի հետ, տեղեկացրեք երիտասարդների կամ ապաստանի տրամադրման հարցերով զբաղվող մարմիններին: Դա բացասական հետեւանք չի ունենա ձեր ապաստանի դիմումի վրա:



Ի՞նչ աջակցություն կտրամադրվի ընթացակարգի շրջանակներում։

Ապահով վայր՝ մնալու համար

Կենցաղային հագուստ

Անհրաժեշտ այլ պարագաներ

Սնունդ

Կարող եք դիմել բժշկի

Կհաճախեք դպրոց։

Դուք կբնակվեք ձեզ հարմարավետ մի վայրում եւ կստանաք ձեր տարիքին համապատասխան ողջ անհրաժեշտ խնամքն ու աջակցությունը։

Ես ապաստան խնդրեցի, հիմա ի՞նչ կլինի:

Նախ, ձեր դիմումը պետք է գրանցվի եւ ներկայացվի:

Դիմումը գրանցելու և ներկայացնելու համար ձեր խնամակալը փախստականների հարցերով զբաղվող մարմնին ուղարկում է ձևաթուղթ: Այնուհետև, ձեզ նշանակում են օր, որին խնամակալի հետ միասին նույն օրը տալիս, գրանցում և ներկայացնում եք ապաստան հայցելու դիմումը: Ձեր դիմումը կգրանցվի եւ կներկայացվի նույն օրը:

Ձեր խնամակալը, ձեր ժամանակավոր խնամակալը կամ ձեր բնակության վայրում աշխատող մեծահասակները կտեղեկացնեն ձեզ օրվա և ժամի մասին, եւ ձեր խնամակալը ձեզ կուղեկցի իշխանություններին:

Ընթացակարգի ընթացքում ձեր խնամակալը ձեզ հետ կլինի:

Գրանցման եւ տեղավորման ժամանակ ձեզանից կպահանջվի կատարել հետեւյալ քայլերը՝

Դուք պետք է պաշտոնատար անձանց ներկայացնեք ձեզ մոտ եղած անձը հաստատող բոլոր փաստաթղթերը (օրինակ՝ անձնագիր, նույնականացման քարտ եւ այլն)։

Հնարավոր է ձեր եւ ձեր անձնական իրերի զննություն։ Իշխանությունները կարող են ժամանակավորապես պահել ձեր իրերը։ Վտանգավոր առարկաներից բացի, մնացած բոլոր իրերը հետագայում կվերադարձվեն։

Ձեզ կլուսանկարեն։

Ձեր մատնահետքերը կվերցվեն։

դուք կարող եք դիմել բժշկի

- պաշտոնյան ձեզ հարցեր կտա ձեր, եւ Եվրոպայում ձեր ընտանիքի մասին
- լրացուցիչ տեղեկություններ կհավաքագրվեն. ձեր կրոնական կամ ազգային պատկանելության, այն լեզուների մասին, որոնցով խոսում եք, և որոնք հասկանում եք, և ինչ դպրոց/ներ եք հաճախել



Պաշտոնյան կխնդրի ձեզ տրամադրել ձեր կոնտակտային տվյալները (ձեր հասցեն եւ հեռախոսահամարը):

Ձեզ լրացուցիչ հարցեր կտրվեն հետեւյալի վերաբերյալ

- դուք եւ ձեր ընտանիքը
- ձեր երկիրը եւ այն վայրերը, որտեղ դուք նախկինում ապրել եք
- ինչու՞ եք լքել ձեր երկիրը եւ ինչու՞ չեք ուզում վերադառնալ
- ինչպե՞ս եք ճանապարհորդել դեպի Գերմանիա

Հիշե՛ք։

Շատ կարեւ որ է, որ դուք խոսեք ձեր խնամակալի հետ եւ համագործակցեք ապաստան տրամադրող մարմինների հետ։

Այն, ամենն ինչ, որ կպատմեք ձեր խնամակալին կամ պաշտոնյային, կմնա գաղտնի։ Ձեր տրամադրած տեղեկությունները երբեք եւ որեւէ պարագայում չեն հասնի ձեր հայրենիքի իշխանություններին, կամ այն մարդկանց, ովքեր ձեզ համար սպառնալիք են ներկայացնում։

Ապաստանի դիմումի քննության ընթացքում կարո՞ղ եմ մնալ Գերմանիայում:

Գրանցվելուց հետո իրավասու մարմինները կորոշեն, թե որ երկիրն է քննելու ձեր դիմումը: Դա կարող է լինել կա՛մ Գերմանիան, կա՛մ եվրոպական այլ երկիր: Դուք չեք կարող ինքնուրույն ընտրել երկիրը, սակայն ձեր նախասիրությունները հաշվի կառնվեն: Այս ընթացակարգը ձեզ կպարզաբանվի պատասխանատու մարմինների կողմից:

Գերմանիա

Մեկ այլ Եվրոպական երկիր



Գրանցման ընթացքում կարեւոր է, որ իշխանություններին տեղեկացնեք, եթե՝

- ունեք ընտանիքի անդամներ եվրոպական այլ երկրում,
- նախկինում ապաստան եք խնդրել եվրոպական այլ երկրում:

Եթե Եվրոպայում ունեք ընտանիք, պաշտոնյաներին հայտնեք ձեր ընտանիքի մասին բոլոր տեղեկությունները: Դա կարող է հնարավորություն տալ միանալու նրանց՝ կա՛մ այս երկրում, կա՛մ այն երկրում, որտեղ նրանք բնակվում են:

Եթե չգիտեք, թե որտեղ են ձեր հարազատները, կամ կորցրել եք կապը նրանց հետ, կարող եք դիմել ձեր խնամակալին կամ ձեր ներկայացուցչին՝ կամ պատասխանատու պաշտոնյային՝ նրանց գտնելու հարցում օգնություն ստանալու համար:

Որո՞նք են հաջորդ քայլերը գրանցումից եւ տեղավորումից հետո:

Դիմումը ներկայացնելուց հետո ձեզ կտրվի մի փաստաթուղթ, որը հաստատում է, որ դուք ապաստան եք խնդրել: Այս փաստաթուղթը կարեւոր է, ուստի լավ պահպանեք այն: Այն ձեզ հետ պահեք, երբ լքում եք ձեր բնակության վայրը կամ հանդիպում եք իշխանությունների հետ:

Ինչպե՞ս են պաշտոնյաները պարզելու իմ տարիքը:

Եթե չունեք ձեր տարիքը հաստատող փաստաթղթեր, եւ իշխանությունները կասկածում են, որ անչափահաս եք, ապաստանի հարցերով զբաղվող մարմինները կարող են նշանակել տարիքի գնահատման ընթացակարգ:

Տարիքը գնահատելու համար կարող են կիրառվել տարբեր մեթոդներ, օրինակ՝ ուսումնասիրել ձեր ներկայացրած փաստաթղթերը, անցկացնել հարցազրույցներ պաշտոնյաների կամ այլ մասնագետների հետ:

Լուրջ կասկածների դեպքում ձեզ կարող են առաջարկել անցնել բժշկական զննություն, որի համար կպահանջվի ձեր, եւ ձեր խնամակալի գրավոր համաձայնությունը:

Եթե գնահատման արդյունքում պարզվի, որ դուք 18 տարեկանից բարձր եք, կհամարվեք չափահաս, ինչի վերաբերյալ կստանաք լրացուցիչ տեղեկատվություն:

Եթե իշխանությունները ենթադրեն, որ ձեզ վնաս են պատճառել, ապա կառաջարկեն անցնել բժշկական զննություն: Դրա արդյունքները հաշվի կառնվեն ձեր դիմումի քննության ընթացքում:

Դիմումը ներկայացնելուց հետո ձեզ կարող են հրավիրել մեկ կամ մի քանի անհատական հարցազրույցի:

Հարցազրույցի ընթացքում լիազորված անձը ձեզ կուղղի հարցեր ձեր անձնական տվյալների, ձեր երկիրը լքելու պատճառների եւ վերադառնալ չցանկանալու հանգամանքների վերաբերյալ: Իշխանությունների կողմից հրավեր ստանալու դեպքում ձեր ներկայությունը պարտադիր է: Դուք պետք է հնարավորինս մանրամասն ներկայացնեք ձեր իրավիճակը: Խնդրում ենք նկատի ունենալ, որ հարցազրույցը ձայնագրվելու է:

Ձեր խնամակալը կտեղեկացնի ձեզ հարցազրույցի անցկացման վայրի եւ ժամի մասին, ինչպես նաեւ կցուցաբերի անհրաժեշտ աջակցություն դրա ընթացքում:



Ի՞նչ անել, եթե չես հասկանում պաշտոնյաների լեզուն:



Եթե դուք չեք հասկանում ապաստանի տրամադրման հարցերով զբաղվող աշխատակիցների լեզուն, թարգմանիչը, որը կարող է խոսել ձեր լեզվով, կօգնի ձեզ հասկանալ:

Թարգմանիչն այստեղ է միայն նրա համար, որ թարգմանի ձեր ասածը: Այն ամենն, ինչ կասեք՝ գաղտնի կմնա:

Եթե ցանկանում եք, որ ձեզ հետ աշխատող մասնագետը կամ թարգմանիչը լինի կին կամ տղամարդ, կարող եք այդ մասին խնդրել: Մենք կփորձենք կատարել ձեր խնդրանքը: Խնդրում ենք հարցազրույցից առաջ հնարավորինս շուտ ասել ձեր պատասխանատուին, թե ում եք նախընտրում՝ կին, թե տղամարդ:

Որքա՞ն ժամանակ է տեւում ապաստանի դիմումի քննությունը:

Հարցազրույցից հետո ձեր ներկայացրած ողջ տեղեկատվությունը մանրամասն կուսումնասիրվի։ Որոշման կայացման գործընթացը կարող է տեւել մինչեւ **6 ամիս՝** բնակության վայրի տրամադրման օրվանից սկսած։ Որոշ դեպքերում այն կարող է ավելի երկար տեւել, սակայն չի գերազանցի **21 ամիսը**։ Հասկանում ենք, որ սպասելը կարող է դժվար լինել, սակայն խնդրում ենք լինել համբերատար։ Իշխանությունները ձգտում են կայացնել ձեզ համար լավագույն եւ արդար որոշումը։

Եթե սպասման ընթացքում որեւէ դժվարության հանդիպեք, կարող եք ցանկացած պահի դիմել ձեր խնամակալի օգնությանը։



Ընկերներիցս մեկը պատմեց, որ իր ապաստանի դիմումը չեն ուզում նորից դիտարկել: Ինչո՞ւ է այդպես լինում:

Իշխանությունները նախ ստուգում են՝ արդյոք անհրաժեշտ է քննարկել ապաստանի դիմումը, թե ոչ:

Եթե պարզվի, որ դիմողը արդեն ստացել է պաշտպանություն մեկ այլ երկրում, կամ գալիս է այնպիսի երկրից, որը համարվում է անվտանգ, իշխանությունները կարող են որոշել չքննարկել դիմումը ամբողջությամբ:

Ի՞նչ որոշում կստանամ:

Ապաստանի հարցերով զբաղվող մարմինները կորոշեն՝ արդյոք դուք ապաստանի կարիք ունեք, թե՞ կան այլ տարբերակներ ձեզ համար:

Որոշումը ձեզ կբացատրվի:

Եթե դուք ստանաք բացասական որոշում, եւ՝ եթե դուք կամ ձեր խնամակալը համաձայն չեք դրա հետ, կարող եք որոշումը բողոքարկել դատարան: Այս գործընթացը կոչվում է՝ վերաքննիչ բողոք:

Ինչպե՞ս կարող եմ ստանալ մանրամասն տեղեկատվություն ապաստանի ընթացակարգի վերաբերյալ:

Ապաստանի ընթացակարգի, ինչպես նաեւ դրա շրջանակներում ձեր իրավունքներիեւ պարտականությունների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար կարող եք դիմել ոչ միայն ձեր խնամակալին, այլեւ իրավաբանական խորհրդատուներին: Նրանց հետ կապ հաստատելու ուղիների մասին տեղեկություն ստանալու համար դիմե՛ք ձեր խնամակալին:



Եթե ցանկանում եք, որ փաստաբանը օգնի ձեզ, խոսեք ձեր խնամակալի կամ այլ պաշտոնյայի հետ:

Փաստաբանը, ձեր խնամակալի հետ միասին, կարող է օգնել ձեզ՝

պատրաստվել իշխանությունների հետ հարցազրույցին,

խոսել ապաստանի պատասխանատուների հետ,

հասկանալ ձեր ապաստանի դիմումի եւ բողոքարկման վերաբերյալ որոշումը, եթե դուք կամ ձեր խնամակալը համաձայն չեք որոշման հետ:

Ապաստանի տրամադրման ընթացակարգի ցանկացած փուլում կարող եք կապ հաստատել ՄԱԿ ՓԳՀ-ի հետ՝ աջակցություն եւ պաշտպանություն ստանալու համար: Մեր աշխատակիցները տեղեկատվություն եւ օգնություն են տրամադրում ապաստան հայցողներին եւ փախստականներին:

Լրացուցիչ մանրամասների համար այցելեք՝ https://help.unhcr.org/.

UNHCR
The UN Refugee Agency

Ու՞մ դիմել օգնության համար, եթե ինձ լավ չեմ զգում կամ հաճախակի անհանգստություն եմ ապրում:

Տեղեկացրեք ձեր խնամակալին, պաշտոնյային կամ ձեր գտնվելու վայրում աշխատող անձնակազմին, եթե՝

ինչ-որ մեկը ձեզ վիրավորել է,

դուք տխուր եք, զայրացած, վախեցած եք կամ դժվարանում եք քնել,

դուք ունեք որեւէ այլ դժվարություն, ինչպիսիք են՝ հաշմանդամությունը կամ հիվանդությունը, կամ եթե հղի եք:

Նման դեպքերում դուք կստանաք օգնություն:

Արդյո՞ք ես որեւէ պարտավորություններ ունեմ:



Այո:

Դուք պետք է հետեւեք այս երկրի օրենքներին եւ կանոններին:

Եթե կասկածներ ունեք կանոնների կամ օրենքների վերաբերյալ, հարցրեք ձեր խնամակալին:

Դուք պարտավոր եք մնալ ձեր խնամակալի կողմից նշված վայրում:

Իշխանությունները ձեզ համար կացարան են հատկացրել: Արգելվում է ինքնակամ լքել բնակավայրը կամ Գերմանիան առանց համապատասխան թույլտվության:

Անհրաժեշտ է համագործակցել պաշտոնատար անձանց հետ պատասխանելով նրանց հարցերին, եւ հետեւելով նրանց հրահանգներին:

Անկեղծ եղեք եւ իշխանություններին պատմեք այն ամենը, ինչ գիտեք, երբ նրանք ձեզ հարցեր են տալիս: Ձեր ասածը շատ կարեւոր է ձեր դիմումի համար: Դուք կարող է ամեն ինչ չհիշեք եւ չկարողանաք պատասխանել բոլոր հարցերին: Եթե չեք կարողանում հիշել, մի հորինեք պատասխան, այլ բացատրեք, որ չեք հիշում:

Դուք պետք է մասնակցեք իշխանությունների հետ բոլոր հանդիպումներին: Այս հանդիպումները շատ կարեւոր են: Դուք պետք է ներկայանաք նշված օրը եւ ժամին:

Ձեր կոնտակտային տվյալները պետք է ճիշտ լինեն

Որպեսզի բոլոր կարեւոր տեղեկությունների ու հանդիպումների մասին ծանուցումները հասնեն ձեզ, անհրաժեշտ է, որ իշխանություններին տրամադրեք ձեր հստակ հասցեն կամ հեռախոսահամարը:

Ձեր խնամակալը նույնպես կունենա այս տեղեկությունը եւ կկարողանա հիշեցնել ձեզ նշանակված հանդիպումների մասին: Եթե ձեր հասցեն կամ հեռախոսահամարը փոխվի, խնդրում ենք անմիջապես տեղեկացնել ձեր խնամակալին եւ ապաստանի հարցերով զբաղվող մասնագետներին: Շատ կարեւոր է, որ նրանք միշտ կարողանան կապ հաստատել ձեզ հետ:

Դուք պետք է իշխանություններին տրամադրեք ձեր ունեցած բոլոր փաստաթղթերը: Նրանց տրամադրեք ձեր ունեցած բոլոր փաստաթղթերը, որոնք վերաբերում են ձեզ եւ ձեր երկիրը լքելու պատճառներին: Դրանք ներառում են անձը հաստատող փաստաթղթեր (անձնագիր), ծննդյան կամ դպրոցական վկայական, բժշկական փաստաթուղթ, կամ այլ փաստաթղթեր: Դուք պետք է հնարավորինս շուտ ներկայացնեք բոլոր տեղեկություններն ու փաստաթղթերը: Եթե այս պահին փաստաթղթեր չունեք, կարող եք դրանք տրամադրել ավելի ուշ: Խոսեք ձեր խնամակալի հետ: Ձեր խնամակալը կարող է օգնել ձեզ ստանալ այդ փաստաթղթերը եւ ժամանակին տրամադրել դրանք իշխանություններին:

Եթե չեք կարողանում կատարել ձեր պարտավորությունները, անմիջապես տեղեկացրեք ձեր խնամակալին եւ ապաստանի գրասենյակի աշխատակիցներին, եւ բացատրեք պատճառը:

Ի՞նչ տեղի կունենա, եթե չկատարեմ իմ պարտավորությունները:

Եթե դուք չկատարեք ձեր պարտավորությունները, դա կարող է բացասաբար անդրադառնալ ձեր դիմումի վրա: Դուք կարող եք զրկվել որոշ իրավունքներից եւ աջակցության ծառայություններից, որոնց մասին տեղեկացրել եմ նախկինում:

Ձեր՝ ապաստան ստանալու գործընթացը կարող է դադարեցվել կամ մերժվել, եթե դուք չկատարեք ձեր պարտավորությունները: Օրինակ, եթե դուք՝

- չպատասխանեք իշխանությունների հարցերին,
- թույլ չտաք վերցնել ձեր մատնահետքերը,
- առանց թույլտվության լքեք ձեր գտնվելու վայրը:

Նման դեպքերում իշխանությունները կեզրակացնեն, որ դուք լուրջ չեք վերաբերվում ձեր դիմումին: Արդյունքում, դուք կդադարեք համարվել դիմումատու,եւ կզրկվեք ձեզ տրամադրվող ողջ աջակցությունից:

Եթե դուք իշխանություններին չհայտնեք ձեր, կամ ձեր պատմության մասին ճշմարտությունը, կամ եթե թաքցնեք կարեւոր տեղեկություններ, կամ դիտավորյալ ոչնչացնեք ձեր փաստաթղթերը, ձեր դիմումը կարող է մերժվել, եւ ձեզ կարող է ապաստան չտրամադրվել:

Եթե իշխանությունները հետագայում պարզեն, որ դուք ճշմարտությունը չեք ասել ապաստանի ընթացակարգի ընթացքում, ապաստանը կարող է զրկվել ձեզանից:

Ես ձեզ ներկայացրեցի բոլոր անհրաժեշտ տեղեկությունները: Ապաստանի հայցման գործընթացի ընթացքում ձեր խնամակալը եւ պատկան մարմինները կտրամադրեն լրացուցիչ պարզաբանումներ:

Հիշե՛ք։
Ապաստան խնդրելն անվճար է։





Զգույշ եղե՛ք

Զգուշություն դրսեւորեք այն անձանց նկատմամբ, ովքեր օգնություն են առաջարկում որեւէ ծառայության կամ գումարի դիմաց, քանի որ նրանք կարող են ունենալ վնասակար մտադրություններ։

Եթե որեւէ մեկը ձեզ հորդորում է հեռանալ, հիշե՛ք, որ դա կարող է վտանգավոր լինել ձեր անվտանգության համար։ Մի՛ լքեք ձեր գտնվելու վայրը։



Եթե որեւէ մեկը փորձում է ձեզ համոզել կամ ստիպել անել այնպիսի բան, որը դուք չեք ցանկանում, կամ որը ձեզ սխալ է թվում, անհապաղ դիմեք ձեր խնամակալին կամ ձեր բնակության վայրի պատասխանատու անձանց։

Ի՞նչ անել, եթե ես որոշեմ վերադառնալ հայրենիքս, եւ կանգնեցնեմ իմ դիմումի գործընթացը, ո՞ւմ դիմեմ օգնության համար:



Եթե ցանկանում եք վերադառնալ ձեր հայրենիք եւ դադարեցնել ձեր դիմումը, տեղեկացրեք ձեր խնամակալին եւ իշխանություններին: Նրանք կարող են օգնել ձեզ անվտանգ վերադառնալ:

Եթե ունեք լրացուցիչ հարցեր իմ բացատրության վերաբերյալ, հարցրեք ձեր խնամակալին, իշխանություններին կամ ձեր գտնվելու վայրում աշխատող անձնակազմին:

euaa
EUROPEAN UNION AGENCY FOR ASYLUM

Bundesamt für Migration und Flüchtlinge

Սույն գրքույկը կրում է բացառապես տեղեկատվական բնույթ եւ ինքնին որեւէ իրավունք կամ պարտավորություն չի առաջացնում: Նյութի հիմնական մասը տրամադրել է Եվրոպական Միության ապաստանի գործակալությունը (ԵՄԱԱԳ): Այս գրքույկի վերարտադրությունն ու փոփոխումը ԵՄԱԱԳ-ի կողմից թույլատրվում է միայն ԵՄ անդամ պետություններին: ԵՄԱԱԳ-ն պատասխանատվություն չի կրում ԵՄ անդամ պետությունների կամ որեւէ այլ երրորդ կողմի կողմից տրամադրված՝ սույն գրքույկում տեղ գտած տեղեկատվության ճշգրտության, բովանդակության, ամբողջականության, օրինականության կամ հուսալիության համար: Ո՛չ ԵՄԱԱԳ-ն, ո՛չ էլ նրա անունից հանդես եկող որեւէ անձ պատասխանատու չէ այստեղ պարունակվող տեղեկատվության հնարավոր օգտագործման համար:

© Եվրոպական Միության ապաստանի գործակալություն, 2025